ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- դեկտեմբերի 2021 թվականի №---Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի №727Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի 46-րդ կետը, և հաշվի առնելով «ՇԻՆ ԱՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի նոյեմբերի 29-ի և ի լրումն դեկտեմբերի 9-ի գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 19-ի «ՇԻՆ ԱՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Սոլակ-2» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №727Ա՝
   1) որոշման մեջ «մինչև 2022 թվականի փետրվարի 3-ը» բառերը փոխարինել «մինչև 2021 թվականի դեկտեմբերի 23-ը» բառերով, իսկ «մինչև 2041 թվականի փետրվարի 3-ը» բառերը՝ «մինչև 2041 թվականի դեկտեմբերի 23-ը» բառերով,
   2) որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

      «9. Կայանի փաստացի տեղակայված (դրվածքային) հզորությունը 1509 կՎտ է:»:

2. «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ամբողջությամբ ազատել 2021 թվականի սեպտեմբերի 16-ի №O.AB.100.12CIB.PIED.0.14471.21 գրությամբ ներկայացված բանկային երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած 3 772 500 (երեք միլիոն յոթ հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր) դրամ գումարի երաշխիքային պարտավորությունից:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի դեկտեմբերի 23-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- դեկտեմբերի 2021թ.